ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հոկտեմբերի 26-ից 28-ը Շվեյցարիայի Համադաշնություն՝ ք. Ժնև կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև 2022թ. հոկտեմբերի 26-28-ը

4. Հրավիրող կողմը՝
Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միություն (ՈՒՊՈՎ)

5. Գործուղման նպատակը՝

- Անդամակցում Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միությանը (ՈՒՊՈՎ)
- «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում

6. Քննարկված թեմաները՝

- «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի համապատասխանելիություն ՈՒՊՈՎ կանոնադրությանը,
- Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միությանը (ՈՒՊՈՎ),
- Բուծողների իրավունքների պաշտպանության, նոր սորտերի սահմանված փորձարկումների իրականացման արդյունավետության բարձրացման մեխանիզմներ և ընթացակարգեր,
- Կլիմայի փոփոխության պայմաններում, պարենային անվտանգության ապահովման նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունում նոր սորտերի սելեկցիայի խթանում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Շվեյցարիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում Արման Խոջոյանը ՈՒՊՈՎ Խորհրդատվական Կոմիտեի նիստին և վերջինիս հաջորդող Խորհրդի նստաշրջանին հանդես է եկել «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ելույթով: Կարևորելով ՈՒՊՈՎ անդամակցության հարցը՝ նախարարի տեղակալը նշել է, որ աշխարհում տեղի ունեցող վերջին ցնցումների, կլիմայի փոփոխության և բնակչության գլոբալ աճի պայմաններում հատկապես առաջնահերթ է սննդի անվտանգության սպառնալիքների դեմ սննդի դիմացկուն համակարգերի ստեղծումը: Այս առումով Հայաստանի Հանրապետության կառավարության համար չափազանց կարևոր է Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միությանն (ՈՒՊՈՎ) ամենակարճ ժամկետում անդամակցությունը, քանի որ նախադրյալներ կստեղծվեն միջազգային սելեկցիոն գիտական աշխատանքների ինտեգրման, այգեգործության ոլորտում ներդրումների ներգրավման համար և նոր հնարավորություններ՝ ուղղված այգեգործության ոլորտի արտադրողականության բարձրացմանը: Միևնույն ժամանակ առաջնային է սելեկցիոների իրավունքների պաշտպանությունը, նրանց գիտական գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը և շահույթի մեխանիզմների մշակումը, հատկապես կլիմայի փոփոխության ներկա պայմաններում, ինչը ստիպում է խիստ պահանջներ կիրառել նորաստեղծ սորտերի նկատմամբ:

Նիստի ընթացքում ՈՒՊՈՎ անդամ երկրների կողմից տարբեր հարցադրումներ են հնչեցվել «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, որոնց տրամադրված պատասխանների արդյունքում ներկայացված օրենքի նախագիծը ամբողջապես համապատասխան է ճանաչվել ՈՒՊՈՎ կանոնադրությանը:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) գործադիր տնօրեն Դարեն Թանգի հետ: Կողմերը անդրադարձել են բուսաբուծության ոլորտում ներդրումների իրականացման, տնտեսավարողների համար առավել մրցունակ, բարձր բերքատվությամբ և լավագույն որակներով օժտված նոր սորտերի և հիբրիդների սերմերի և տնկանյութի ձեռք բերման հնարավորությանը, սելեկցիոներների կողմից կամ տեղական սելեկցիայի արդյունքում ստեղծված լավագույն տեղական սորտերի պահպանության իրականացմանը:

Այցի ժամանակ հանդիպում է տեղի ունեցել նաև «Uniting Breeders, Protecting Innovation CIOPORA» միջազգային ընկերության գործադիր տնօրեն Էդգար Կրիգերի հետ: Քննարկվել են սերմերի արտադրությամբ զբաղվող գիտական կենտրոնների հետ համատեղ համագործակցության հնարավորությունները:

Ի թիվս այլ երկրների ներկայացուցիչների հետ հանդիպումների՝ քննարկումներ են տեղի ունեցել նաև Ղազախստանի գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աբուլիայիր Տամաբեկի հետ՝ երկու երկրների միջև գյուղատնտեսության ոլորտում հնարավոր համագործակցության վերաբերյալ:

Այցի շրջանակներում նախարարի տեղակալը նաև մասնակցել է «Բույսերի սելեկցիան և բույսերի սորտերի պահպանությունը՝ որպես կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառում» խորագրով սեմինարին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միության (ՈՒՊՈՎ) խորհրդի նստաշրջանում Հայաստանի օրենքի նախագիծը հաստատվեց և ճանաչվեց ամբողջապես՝ ՈՒՊՈՎ օրենսդրությանը համապատասխան: ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ Հայաստանն անմիջապես կդառնա ՈՒՊՈՎ լիարժեք անդամ:

ՈՒՊՈՎ անդամակցությունը հնարավորություն կտա՝

- ֆերմերներին ձեռք բերել բարձրորակ, բարձր արտադրողականությամբ սերմեր և տնկանյութ, որը նախկինում սահմանափակ էր,
- կխթանի օտարերկրյա ներդրումները սերմնաբուծության և տնկարանային արտադրության ոլորտում, որը նախկինում՝ ՈՒՊՈՎ անդամակցության բացակայության հետևանքով, զսպվում էր և տեղի չէր ունենում,
- կնպաստի գիտական սելեկցիոն աշխատանքների գրավչության բարձրացմանը և սելեկցիոն ձեռքբերումների դրամայնացմանը, ինչպես նաև՝ Հայաստանի ինտեգրմանը միջազգային սելեկցիոն գիտական աշխատանքներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

«Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ մտնելուց և բույսերի սորտերի և ցեղերի ցանկը ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետությունը կդառնա ՈՒՊՈՎ լիարժեք անդամ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

01.11.2022թ.